ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող., 1
Հեռ.՝ (+374 10) 59 53 04
Ֆաքս՝ (+374 10) 52 42 82
Էլ. փոստ՝ minister@minfin.am
Վեբ կայք՝ www.minfin.am

10022998

26.05.11 N 12/48-4-1138

Ձեր N

**ՀՀ կենտրոնական բանկի**
**նախագահ**
**պրն. Ա. Ջավադյանին**

Հարգելի պարոն Ջավադյան

Ուսումնասիրելով Ձեր 2011 թվականի ապրիլի 6-ի թիվ 23.1-07/0394-11 գրությամբ ներկայացված՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի շրջանակներում մշակված օրենքների նախագծերը՝ հայտնում ենք հետևյալը.

1. **<<Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծով խմբագրվող <<Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի** 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի <<ժը>> ենթակետում և ամբողջ տեքստում <<ինտերնետ շահումով խաղ և վիճակախաղ>> բառերն առաջարկում ենք փոխարինել <<ինտերնետ շահումով խաղ>> բառերով, քանի որ համաձայն <<Վիճակախաղերի մասին>> և <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքների՝ ինտերնետ վիճակախաղ՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ, նախատեսված չէ:

2. **<<Շահումով խաղերի և խաղատների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում.**

ա) 3-րդ հոդվածով նախատեսված 4.1-րդ հոդվածում.

1) Հաշվի առնելով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սույն գրությամբ ներկայացվող առաջարկությունները՝ անհրաժեշտ է Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսված 4.1-րդ

հոդվածի 2-րդ մասի <<դ>> կետում <<դատական կարգով>> բառերը փոխարինել <<որպես պատասխանատվության միջոց>> բառերով:

2) 4-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունում <<Կազմակերպչի մասնակիցը>> բառերից հետո ավելացնել <<(ֆիզիկական անձի դեպքում)>> բառերը, քանի որ «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթները վերաբերում են ֆիզիկական անձանց գույքին և եկամուտներին:

բ) 5-րդ հոդվածով նախատեսված 6-րդ հոդվածում.

1) 2-րդ մասում առաջարկվող <<բ.1>> կետում <<ապահովում է>> բառերից հետո լրացնել <<լիազոր մարմնի սահմանած չափանիշներին համապատասխան>> բառերը, քանի որ օրենքով միայն սահմանվում է նախարարի առկայություն, և նախարարի համար նախատեսված չեն չափանիշներ, որոնք պետք է պահպանվեն գործունեության իրականացման ընթացքում:

2) 3-րդ մասի ժզ) կետում «խաղատների» բառից հետո լրացնել <<կամ շահումով խաղերի>> բառերը, քանի որ նպատակահարմար է, որ նշված պահանջը վերաբերի նաև այն շենքերին և շինություններին, որտեղ կազմակերպվում են շահումով խաղեր:

Սույն առաջարկությունը վերաբերում է նաև <<Գովազդի մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետով Օրենքի 15-րդ հոդվածի 15-րդ մասում առաջարկվող լրացմանը:

3) Հաշվի առնելով ·սպառողների պաշտպանության և կազմակերպիչների ֆինանսական ապահովության անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք <<Շահումով խաղերի և խաղատների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածում լրացնել 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

<<4. Կազմակերպիչը ֆինանսական պարտավորությունների կատարման երաշխավորման նպատակով պետք է ունենա պահուստ, որի չափի սահմանման, ձևավորման, ծախսման ու համալրման կարգը և պայմանները սահմանում է լիազոր մարմինը:

Սույն մասով սահմանված պահուստը կարող է օգտագործվել լիազոր մարմնի սահմանած կարգով՝ հաճախորդներին շահումներ տրամադրելու և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հանդեպ պարտավորությունները մարելու

նպատակով, ինչպես նաև <<Սնանկության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում:>>:

գ) Հաշվի առնելով սույն գրության 2-րդ կետի <<բ>> ենթակետի 3-րդ կետով ներկայացված առաջարկությունը և այն, որ երաշխիքային պահուստի առկայությունը անհրաժեշտ է լիցենզավորման փուլում՝ առաջարկում ենք Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել <<գ.3>> կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<գ.3) Հայտին կից ներկայացված չեն սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահուստի՝ օրենսդրությամբ նախատեսված չափով ու ձևավորման պայմաններով և կարգով փահուստի առկայության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:>>:

դ) 01.01.2011թ. ուժի մեջ մտած <<Շահութահարկի մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ կազմակերպությունները ֆինանսական հաշվետվությունից հարկային մարմիններ են ներկայացնում միայն շահութահարկի հաշվարկները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ կազմակերպիչների գործունեությունն արդյունավետ վերահսկելու նպատակով առաջարկում ենք նախագծի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

<<**Հոդված 8.** Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<1. Շահումով խաղերի կամ խաղատան կազմակերպիչը լիազոր մարմին է ներկայացնում ֆինանսական հոսքերի մասին ամսեկան հաշվետվություն, որի ներկայացման կարգը, ժամկետները, բովանդակությունը և ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպիչը, մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 30-ը, լիազոր մարմին է ներկայացնում հաշվապահական հաշվառման օրենսդրությանը համապատասխան կազմված ֆինանսական վիճակի և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունների վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացությունը և հաշվապահական հաշվառման օրենսդրությանը համապատասխան՝ ֆինանսական վիճակի և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունները հրապարակում է առնվազն 1000 տպաքանակ ունեցող մամուլում կամ իր ինտերնետային կայք էջում ու մինչև հաշվետու

տարվան հաջորդող տարվա մայիսի 15-ը լիազոր մարմին է ներկայացնում թերթի մեկ օրինակը կամ տեղեկատվություն ինտերնետային կայք էջում տեղադրելու մասին:>>:

ե) Հաշվի առնելով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սույն գրությամբ ներկայացվող առաջարկությունները՝ անհրաժեշտ է Օրենքի 11-րդ հոդվածի <<ղ>> կետում <<դադարեցման հայցով դիմում է դատարան>> բառերը փոխարինել <<դադարեցում>> բառով:

զ) Առաջարկում ենք Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի <<բ>> կետում նախատեսել փոփոխություն, համաձայն որի՝ 21 տարին չլրացած ֆիզիկական անձանց մուտքը խաղասրահ չարգելելու դեպքում՝ որպես պատասխանատվության միջոց, կկիրառվի տուգանք հինգ հարյուր հազար ՀՀ դրամի չափով՝ երկու հարյուր հազարի փոխարեն:

է) Հաշվի առնելով սույն գրության 2-րդ կետի <<բ>> ենթակետի 3-րդ մասի առաջարկությունը՝ անհրաժեշտ է համապատասխան պատասխանատվության միջոց սահմանել լրացմամբ առաջարկվող պահանջի չկատարման համար, ինչպես նաև <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սույն գրությամբ ներկայացվող առաջարկությունները՝ անհրաժեշտ է Նախագծի 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<**Հոդված 11.** Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում «6-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կամ «ը» կետերով» բառերը փոխարինել «4.2-րդ հոդվածով, 5.1-րդ հոդվածի 5-րդ մասով, 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «բ.2», «ը» կամ «ժբ» կետերով, 6-րդ հոդվածի 4-րդ մասով» բառերով:>>:

ը) Նախագծի 12-րդ հոդվածում.

1) 1-ին մասում <<այլ>> բառն առաջարկում ենք հանել:

2) 2-րդ մասում <<գործունեությունը կասեցվում է>> բառերն առաջարկում ենք փոխարինել <<գործունեությունը համարվում է կասեցված>> բառերով: Փոփոխության իրականացման նպատակը օրենքի ուժով գործունեության կասեցումն է, ինչը զերծ կպահի վարչական վարույթի գործընթաց սկսելուց:

3) 3-րդ մասով սահմանված պայմանի հստակեցման անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկում ենք 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<3. Եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ շահումով խաղերի կամ

խաղատան կազմակերպման լիցենզիա ստացած անձանց կողմից սույն օրենքից բխող անհրաժեշտ փաստաթղթերով մասնակիցը սույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ չի կարող հանդիսանալ մասնակից կամ լիազոր մարմինը հիմնավոր կասկածներ ունի, որ ներդրված դրամական միջոցները ձեռք են բերվել ոչ օրինական ճանապարհով, ապա լիազոր մարմինը տրամադրված շահումով խաղերի կազմակերպման և խաղատան լիցենզիայի գործողությունը կասեցնում է մինչև կազմակերպչի կողմից սույն օրենքով սահմանված անհրաժեշտ և բավարար հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելը:>>

**3. <<Վիճակախաղերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծում.**

ա) 2-րդ հոդվածով առաջարկվող լրացման 4.1 հոդվածում.

1) Հաշվի առնելով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սույն գրությամբ ներկայացվող առաջարկությունները՝ անհրաժեշտ է Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված 4.1-րդ հոդվածի 2-րդ մասի <<ե>> կետում <<դատական կարգով>> բառերը փոխարինել <<որպես պատասխանատվության միջոց>> բառերով:

2) 4-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունում «Կազմակերպչի մասնակիցը» բառերից հետո ավելացնել <<(ֆիզիկական անձի դեպքում)>> բառերը, քանի որ <<Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթները վերաբերում են ֆիզիկական անձանց գույքին և եկամուտներին:

բ) <<Վիճակախաղերի մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածում.

1) Հաշվի առնելով սպառողների պաշտպանության և Կազմակերպիչների ֆինանսական ապահովության անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել <<ժդ>> կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

2) 1-ին մասում լրացնել նոր <<ժդ>> կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<ժդ) Ապահովում է 200 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ երաշխիքային պահուստի առկայություն, որը կարող է օգտագործվել միայն լիազոր մարմնի սահմանած դեպքերում և կարգով, ինչպես նաև <<Սնանկության մասին>> Հայաստանի Հանրապետության մասին օրենքով նախատեսված դեպքերում:

Սույն կետով սահմանված երաշխիքային պահուստի ձևավորման, ծախսման ու համալրման կարգը և պայմանները սահմանում է լիազոր մարմինը:»:

3. Առաջարկում ենք 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել, քանի որ ըստ մեր առաջարկությունների՝ վիճակախաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգը ներառում է վիճակախաղի տոմսի աշխատանքային նմուշը: Ուստի, Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթի անհրաժեշտությունը բացակայում է:

գ) 01.01.2011թ. ուժի մեջ մտած <<Շահութահարկի մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ կազմակերպությունները ֆինանսական հաշվետվությունից հարկային մարմիններ են ներկայացնում միայն շահութահարկի հաշվարկները: Հաշվի առնելով վերոգրյալը և վերահսկողության նպատակներից ելնելով՝ վիճակախաղերի կազմակերպիչների ֆինանսական հոսքերի վերաբերյալ տեղեկատվությանը տիրապետելու տեսանկյունից առաջարկում ենք Օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<6. Կազմակերպիչը լիազոր մարմին է ներկայացնում.

ա) Ֆինանսական հոսքերի մասին ամսեկան հաշվետվություն, որի ներկայացման կարգը, ժամկետները, բովանդակությունը և ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

բ) Մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 30-ը հաշվապահական հաշվառման օրենսդրությանը համապատասխան կազմված ֆինանսական վիճակի և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունների վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացությունը և հաշվապահական հաշվառման օրենսդրությանը համապատասխան՝ ֆինանսական վիճակի և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունները հրապարակում է առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում կամ իր ինտերնետային կայք էջում ու մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 15-ը լիազոր մարմին է ներկայացնում թերթի մեկ օրինակը կամ տեղեկատվություն ինտերնետային կայք էջում տեղադրելու մասին:>>:

դ) Օրենքի 8-րդ հոդվածում.

1. Առաջարկում ենք լրացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

<<1.1 Վիճակախաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգը ներառում է վիճակախաղի տոմսի աշխատանքային նմուշը:>>:

2. Առաջարկում ենք նախագծով 8-րդ հոդվածի 3-րդ մասում <<և վիճակախաղի տոմսի աշխատանքային նմուշը>> բառերը հանել, իսկ 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել, քանի որ վիճակախաղի տոմսի նմուշը ներառվում է կանոնակարգում՝ վերջինսը

հաստատելուց հետո, հետևաբար վիճակախաղի տոմսի նմուշի վերջնական տարբերակի ներկայացման անհրաժեշտությունը բացակայում է:

3. Հաշվի առնելով սպառողների պաշտպանության անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասում լրացնել <<գ>> ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

<< գ) կվտանգեն խաղացողների շահերը:>>:

ե) Հաշվի առնելով սույն գրության 3-րդ կետի <<բ>> ենթակետի 2-կետով ներկայացված առաջարկությունը՝ անհրաժեշտ է Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի <<ե>> ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<ե) հայտին կից ներկայացված չեն սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի <<ժդ>> կետով սահմանված երաշխիքային պահուստի՝ օրենսդրությամբ նախատեսված չափով ու ձևավորման պայմաններով և կարգով փահուստի առկայության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը.>>:

զ) Նախագծի 4-րդ հոդվածում առաջարկում ենք լրացնել նոր մաս՝ համաձայն որի Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող <<11-րդ հոդվածում նշված>> բառերը կհանվեն, քանի որ Նախագծով առաջարկվում են նոր պայմաններ և պահանջներ, որոնց չպահպանումը Օրենքի 11-րդ հոդվածով չի համարվում խախտումներ:

է) Հաշվի առնելով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի վերաբերյալ առաջարկները՝ անհրաժեշտ է Օրենքի 12-րդ հոդվածի <<դ>> կետում <<դադարեցման հայցով դիմում է դատարան>> բառերը փոխարինել <<դադարեցում>> բառով:

ը) Նախագծում առաջարկվող նոր լրացումների համար պատասխանատվության միջոցներ սահմանելու անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

<<Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում «5-րդ հոդվածի 1-ին մասի «ը», «թ» կամ «ժ» կետերով» բառերը փոխարինել «4.2-րդ հոդվածով, 4.3-րդ հոդվածի 5-րդ մասով, 5-րդ հոդվածի 1-ին մասի «ը», «թ», «ժ» <<ժբ>>, <<ժգ>> կամ <<ժդ>> կետերով» բառերով:>>:

թ) Հաշվի առնելով սպառողների շահերի պաշտպանության անհրաժեշտությունը առաջարկում ենք Օրենքի 17-րդ հոդվածի վերնագրում և 1-ին պարբերությունում <<լիցենզիայի գործողության>> բառերից հետո լրացնել <<կասեցման կամ>> բառերը:

ժ) Նախագծի 7-րդ հոդվածում.

1) 1-ին մասում <<այլ>> բառը առաջարկում ենք հանել:

2) 2-րդ մասում <<գործունեությունը կասեցվում է>> բառերն առաջարկում ենք փոխարինել <<գործունեությունը համարվում է կասեցված>> բառերով: Փոփոխության իրականացման նպատակը օրենքի ուժով գործունեության կասեցումն է, ինչը զերծ կպահի վարչական վարույթի գործընթաց սկսելուց:

3) 3-րդ մասով սահմանված պայմանի հստակեցման անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկում ենք 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<3. Եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ վիճակախաղի կազմակերպման լիցենզիա ստացած անձանց կողմից սույն օրենքից բխող անհրաժեշտ փաստաթղթերով մասնակիցը սույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ չի կարող հանդիսանալ մասնակից կամ լիազոր մարմինը հիմնավոր կասկածներ ունի, որ ներդրված դրամական միջոցները ձեռք են բերվել ոչ օրինական ճանապարհով, ապա լիազոր մարմինը տրամադրված վիճակախաղի կազմակերպման լիցենզիայի գործողությունը կասեցնում է մինչև կազմակերպչի կողմից սույն օրենքով սահմանված անհրաժեշտ և բավարար հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելը:>>:

4. **<<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծում**

ա) 1-ին հոդվածում և 2-րդ հոդվածի 1-ին մասում <<15-րդ բաժնի 1-ին, 2-րդ, 2.1-րդ և 3-րդ>> բառերն առաջարկում ենք փեխարինել <<15-րդ բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ>> բառերով, քանի որ 01.01.2011թ. ուժի մեջ մտած <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ ՀՕ-227-Ն օրենքով փոփոխության է ենթարկվել 43-րդ հոդվածի 2-րդ մասի ցանկով սահմանված <<Վիճակախաղերի, շահումով խաղերի բնագավառում>> տրամադրվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների համարակալումը:

բ) Հաշվի առնելով, որ խաղային գործի բնագավառը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսանկյունից համարվում է բարձր ռիսկային ոլորտ, և անհրաժեշտություն է առաջանում օպերատիվ միջոցառումներ ձեռնարկել՝ անհրաժեշտ է Նախագծով Օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասում <<լիցենզիայի գործողությունը>> բառերից հետո լրացնել <<, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի>> բառերը:

5. <<Շահումով խաղերի և խաղատների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Վիճակախաղերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Գովազդի մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մաղսին>> և <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքների նախագծերում Օրենքների ուժի մեջ մտնելու ժամկետն առաջարկում ենք սահմանել 2012 թվականի հունվարի 1-ը:

**6. <<Աուդիտորական գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում.**

ա) <<1-ին հոդվածով նախատեսվող լրացումն առաջարկում ենք կատարել օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի <<դ>> կետում, քանի որ առևտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության գաղտնիության պահպանման վերաբերյալ հիշատակվում է վերոնշյալ մասում, հետևաբար նախագծի առաջին հոդվածն առաջարկում ենք շարադրել հետևյալ բովանդակությամբ.

<<Հոդված 1. <<Աուդիտորական գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (26 դեկտեմբերի 2002 թվականի, ՀՕ-512-Ն) (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 2-րդ մասի <<դ>> կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերությունով.

<<Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված և առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը տրամադրվում է այդ օրենքով սահմանված լիազոր մարմնին փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ կասկածի կամ լիազոր մարմնի հարցման հիման վրա՝ այդ օրենքով սահմանված դեպքերում և կարգով.>>:

բ) Նախագծի 2-րդ հոդվածը հանել, քանի որ ներկայումս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի երկրորդ ընթերցմանը ներկայացված <<Աուդիտորական գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրինագծով այդ դրույթն արդեն իսկ ամրագրված է:

գ) Վերոնշյալ առաջարկություններն ընդունելուց հետո պետք է վերանայել նաև նախագծի վերնագիրը, մասնավորապես՝ նախագծի վերնագրից պետք է հանել <<փոփոխություն և>> բառերը:

**7. «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում.**

ա) 1-ին հոդվածով առաջարկվում է «գույք» հասկացությունը սահմանել որպես «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գույք»: Հարկ ենք համարում նշել, որ նշված կետում «գույքի» սահմանում տրված չէ: Նշվածով պայմանավորված՝ առաջարկում ենք սահմանել «գույք» հասկացության նոր ձևակերպում:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածով տրված «ապրանքներ» հասկացությունը (Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող բոլոր տեսակի առարկաներն ու իրերը, այլ գույքը, այդ թվում՝ արժույթը, արժութային արժեքները, էլեկտրական, ջերմային և այլ տեսակի էներգիան, փոխադրամիջոցները, բացառությամբ սույն հոդվածի «բ» կետով սահմանված տրանսպորտային միջոցների), ըստ էության, իր մեջ ներառում է «գույք» հասկացությունը:

բ) 3-րդ հոդվածով առաջարկվող դրույթի (հայտարարագրման համար նշվող տեղեկությունների ցանկի ընդլայնում) սահմանման անհրաժեշտությունը, մեր կարծիքով, բացակայում է, քանի որ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 128-րդ հոդվածի դրույթներն արդեն իսկ նախատեսում են մաքսային հսկողության և ձևակերպման համար անհրաժեշտ այլ տեղեկությունների ստացում:

գ) 4-րդ հոդվածով առաջարկվող դրույթի նպատակահարմարությունը բացակայում է, քանի որ այն, մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետության և այլ երկրների միջև կնքված միջազգային պայմանագրերի կարգավորման առարկա է և կարող է տարածվել ոչ միայն Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ոսկու, այլև թանկարժեք մետաղների կամ թանկարժեք քարերի, այլ բոլոր ապրանքների տեղափոխումների վրա: Միաժամանակ, հստակ չէ «անսովոր տեղափոխումներ» արտահայտությունը, ինչպես նաև ներկայացված դրույթում ընդգրկված ապրանքների ցանկի ընտրության սկզբունքը: Նշվածով պայմանավորված՝ առաջարկում ենք նախագծի 4-րդ հոդվածը հանել:

դ) Գործող օրենսդրական նորմերին համապատասխանեցնելու նպատակով ներկայացված նախագծի 5-րդ հոդվածում առաջարկում ենք «ֆիզիկական տեղափոխում» բառերը փոխարինել «տեղափոխում» բառով:

ե) 5-րդ հոդվածում նշված է նաև, որ մաքսային մարմինը պետք է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով անմիջապես որոշում կայացնի այդ անձանց ֆինանսական միջոցները կամ այլ գույքը անորոշ ժամկետով սառեցնելու մասին՝ օրենքով սահմանված կարգով:

Սակայն, վերոնշյալ օրենքով ֆինանսական միջոցները կամ այլ գույքը անորոշ ժամկետով սառեցնելու լիազորությունը վերապահված է լիազոր մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին:

Նշվածով պայմանավորված՝ առաջարկում ենք նախագծի 5-րդ հոդվածը այդ մասով լրամշակել:

Միաժամանակ, կարծում ենք, որ անհրաժեշտ է ամբողջականացնել ներկայացված նախագծի 7-րդ հոդվածով առաջարկվող ընթացակարգը, քանի որ առաջարկվող խմբագրությամբ ստացվում է, որ անկախ արժույթի կամ վճարային գործիքների տեղափոխման օրինականության ճշտման փաստից՝ մաքսային մարմինների կողմից դրանց տեղափոխումը չի կարող կանխվել 10 օրից ավելի ժամկետով:

8. Կից ներկայացնում ենք <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>>, <<Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> և <<Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները եկամուտների մասով: Ինչ վերաբերում է օրենքների նախագծերի վերաբերյալ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության ամփոփ գնահատականին, ապա այն հնարավոր է հայտնել ՀՀ կառավարության 28.10.2010թ. N 42 նիստի արձանագրության 1-ին կետով հավանության արժանացած նորմատիվ իրավական ակտերի նախագծերը ներկայացնելու ուղեցույցի 3-րդ կետով

սահմանված ձևաչափով տեղեկանքի և անհրաժեշտ հաշվարկ-հիմնավորումների առկայության պարագայում:

Առդիր 4 էջ:

**Հարգանքով՝**

**Վ. Գաբրիելյան**

Կատ՝ Ֆինանսական շուկայի զարգացման վարչություն
Արա Ախոյան
Հեռ՝ 595-318

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

"Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատումը իրականացրել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 10-ի "Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին" թիվ 1021-Ն որոշմամբ սահմանված կարգով, և հայտնում է հետևյալը:

*1. "Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի կարգավորման առարկան և արդյունքները*

"Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է կարգավորել արժույթի կամ վճարային գործիքների տեղափոխման (ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման) հետ կապված մի շարք հարաբերություններ:

*"Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի չընդունման դեպքում դրա հետևանքները և բյուջետային բնագավառի վրա դրանց ազդեցությունը*

Ներկայացված նախագծի չընդունումը պետական բյուջեի եկամուտների վրա ազդեցություն չի ունենա:

*3. "Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում դրա կիրարկման արդյունքում կանխատեսվող հետևանքները և բյուջետային բնագավառի վրա դրանց ազդեցության գնահատականը*

Ներկայացված նախագծի ընդունման դեպքում կկանոնակարգվեն արժույթի կամ վճարային գործիքների Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխման հետ կապված որոշ հարաբերություններ, մասնավորապես, կապված ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների կամ այլ գույքի սառեցման, համապատասխան տեղեկությունների տրամադրման, արժույթի կամ վճարային գործիքների տեղափոխման արգելման կամ սահմանափակման հետ:

Ներկայացված նախագծի ընդունումը պետական բյուջեի եկամուտների վրա ազդեցություն չի ունենա:

Հաշվի առնելով վերոգրյալը, ներկայացված նախագծի կարգավորման ազդեցությունը բյուջետային բնագավառում գնահատվում է չեզոք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ վիճակախաղի, շահումով խաղի և խաղատան կազմակերպչի մասնակիցը, տնօրենը և պատասխանատու անձը սահմանված կարգով ներկայացնում են ֆիզիկական անձի գույքի և եկամուտների հայտարարագիր:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն, որ գույքի և եկամուտների հայտարարագրի ներկայացումը կարող է նպաստել հարկվող եկամուտների բացահայտմանը և հարկմանը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունումը կարող է դրական ազդեցություն ունենալ պետական բյուջեի եկամուտների վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գործողությունը չի տարածվում «Փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում իրականացվող ստուգումների վրա:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ պետական բյուջեի եկամուտների վրա նախագծի ընդունման ազդեցությունը կլինի չեզոք: